ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար հեռուստացույցների, ջերմային տպիչների, համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«16» հունվարի 2026թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Սեդրակ Սարդարյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/26» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.

ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ն, ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց.

ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի, ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների, մերժված հայտերի և գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին չափաբաժնի մասով ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 2-րդ չափաբաժնի մասով ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 3-րդ չափաբաժնի մասով Նարեկ Յուրիկի Կոստանյան Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 4-րդ և 8-րդ չափաբաժինների մասով ՄՄՄ ՏԵԽ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 5-րդ չափաբաժնի մասով «Պրոսելս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,
- 6-րդ չափաբաժնի մասով ԵԼ4008 ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 8-րդ չափաբաժինների մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2. 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների մասով այն մասնակիցների հայտերը, ում կողմից աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, Համակարգի կողմից համարվել են մերժված:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 3-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց գնման ընթացակարգը 7-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի
Նախագահ՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ _____ Խորեն Պետրոսյան

_____ Սեդրակ Սարդարյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Արուս Խաչատրյան